ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱՔՆՆԻՉ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Քաղաքացիական գործ թիվ ԵԴ/8229/02/23

ՀՀ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության
քաղաքացիական դատարանի 14.04.2023 թվականի վճիռ
նախագահող դատավոր Ռ.Բունիաթյան

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քաղաքացիական դատարանը (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան), հետևյալ կազմով՝

նախագահող դատավոր՝ Կ.Համբարձումյան
դատավոր՝ Ն.Մարգարյան
դատավոր՝ Ս.Թորոսյան

2024 թվականի հունվարի 26-ին Երևան քաղաքում

գրավոր ընթացակարգով քննության առնելով թիվ ԵԴ/8229/02/23 քաղաքացիական գործով ըստ հայցի «ԱԷՄՋԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ նաև՝ «ԱԷՄՋԻ» ՍՊԸ) ընդդեմ «Վարդենիսի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ նաև՝ «Վարդենիսի բժշկական կենտրոն» ՓԲԸ) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին 02.02.2023 թվականի որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, ՀՀ, Երևան քաղաքի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Դատարան) 14.04.2023թվականի վճռի դեմ «ԱԷՄՋԻ» ՍՊԸ անունից ներկայացրած վերաքննիչ բողոքը

Պ Ա Ր Զ Ե Ց

1.Գործի դատավարական նախապատմությունը.

Դատարանի 10.03.2023 թվականի որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ և որոշվել է հրավիրել նախնական դատական նիստ:

Դատարանի 10.03.2023 թվականի որոշմամբ «Վարդենիսի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունից պահանջվել են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված ապացույցները, այն է՝ տվյալ գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցներ:

«Վարդենիսի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կողմից ի կատարումն Դատարանի 10.03.2023 թվականի որոշման դատարան են ներկայացվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված ապացույցները:

Դատարանի 21.03.2023 թվականի արձանագրային որոշմամբ գործին մասնակցող անձանց միջև բաշխվել է ապացուցման պարտականությունը:

Դատարանի 28.03.2023 թվականի որոշմամբ հայցի ապահովման միջոց կիրառելու մասին հայցվորի կողմից ներկայացված միջնորդությունը բավարարվել է

չէ, թե ինչպե՞ս է «ստուգել»: Ավելին, Օրենքի 26-րդ հոդվածով և Կարգի 14-րդ կետով սահմանվել է Հանձնաժողովի իրավասությունները, որոնց շարքում «ստուգում» իրականացնելու հնարավորությամբ Հանձնաժողովն օժտված չէ: Վերջինս կարող է «բացել և գնահատել հայտերը»:

«ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-23/2» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 31.01.2023թ.-ի նիստի թիվ 23/2-3բ արձանագրությամբ, հիմք ընդունելով Կարգի 121-րդ կետը և ուսումնասիրելով մասնակից կազմակերպություններին փոխկապակցված անձանց գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում գտնվելու հանգամանքը, որոշել է մերժել «ԱԷՄՋԻ» ՍՊԸ-ի հայտը, ինչով պայմանավորված՝ գործել է ոչ իրավաչափ, քանի որ մերժման փաստական հիմքը բացակայում է:

Նշել է, որ «ԱԿԱԷՄ» ՍՊ ընկերությունը www.gnumner.minfin.am կայքում առկա գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկում ներառվել է մինչև 2022 թվականի հոկտեմբերի 13-ի թիվ 1593-Ն որոշման ուժի մեջ մտնելու օրը՝ 02.11.2022թ.-ը: Իսկ նույն որոշման 3-րդ կետով սահմանվել է, որ սույն որոշման պահանջները չեն տարածվում մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելն սկսած և դեռևս չավարտված գնման գործընթացների, ինչպես նաև կնքված և գործող պայմանագրերի վրա: Այլ կերպ ասած՝ եթե անգամ ընդունում ենք, որ այդ ընկերություններն ու «ԱԷՄՋԻ» ՍՊ ընկերությունը հանդիսանում են փոխկապակցված ընկերություններ, ապա նշված իրավանորմի հիման վրա «ԱԿԱԷՄ» ԱՊԸ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկում ներառելու փաստը չէր կարող սահմանափակել «ԱԷՄՋԻ» ՍՊ ընկերության մասնակցության իրավունքը: Նշվածը պայմանավորված է այն հանգամանքով, որ «ԱԿԱԷՄ» ՍՊ ընկերության գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկում ներառելը՝ որպես գնման գործընթացի մի մաս, տեղի է ունեցել մինչև 2022 թվականի հոկտեմբերի 13-ի թիվ 1593-Ն որոշման ուժի մեջ մտնելը:

Բողոքաբերը գտել է, որ դատարանի փաստարկն առ այն, որ «ԱԿԱԷՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գնման գործընթացը, որի արդյունքում «ԱԿԱԷՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունն ընդգրկվել է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկում, ավարտվել է 15.10.2022 թվականին, այսինքն՝ մինչև ՀՀ կառավարության 13.10.2022 թվականի թիվ 1593-Ն որոշման օրինական ուժի մեջ մտնելը, որևէ իրավական հիմք չունի, քանի որ վերը նշված պարագայում «ԱԿԱԷՄ» ՍՊ ընկերության գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկում ներառելը՝ որպես գնման գործընթացի մի մաս, տեղի է ունեցել մինչև 2022 թվականի հոկտեմբերի 13-ի թիվ 1593-Ն որոշման ուժի մեջ մտնելը:

Եկել է եզրահանգման, որ դատարանը չի իրականացրել սույն գործով լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի քննություն, քանի որ վերը նշված փաստարկներից և դիրքորոշումից պարզ է դառնում, որ սույն գործով նյութերն ուսումնասիրվել են թերի:

Բողոքաբերը նկատել է, որ Կարգի 121-րդ կետը, /այն է՝ մասնակցի՝ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված ցուցակում ներառվելը, դրանում գտնվելու ժամանակահատվածում, ինքնաբերաբար հանգեցնում է վերջինիս հետ փոխկապակցված

չէ, թե ինչպե՞ս է «ստուգել»: Ավելին, Օրենքի 26-րդ հոդվածով և Կարգի 14-րդ կետով սահմանվել է Հանձնաժողովի իրավասությունները, որոնց շարքում «ստուգում» իրականացնելու հնարավորությամբ Հանձնաժողովն օժտված չէ: Վերջինս կարող է «բացել և գնահատել հայտերը»:

«ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-23/2» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 31.01.2023թ.-ի նիստի թիվ 23/2-3բ արձանագրությամբ, հիմք ընդունելով Կարգի 121-րդ կետը և ուսումնասիրելով մասնակից կազմակերպություններին փոխկապակցված անձանց գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում գտնվելու հանգամանքը, որոշել է մերժել «ԱԷՄՋԻ» ՍՊԸ-ի հայտը, ինչով պայմանավորված՝ գործել է ոչ իրավաչափ, քանի որ մերժման փաստական հիմքը բացակայում է:

Նշել է, որ «ԱԿԱԷՄ» ՍՊ ընկերությունը www.gnumner.minfin.am կայքում առկա գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկում ներառվել է մինչև 2022 թվականի հոկտեմբերի 13-ի թիվ 1593-Ն որոշման ուժի մեջ մտնելու օրը՝ 02.11.2022թ.-ը: Իսկ նույն որոշման 3-րդ կետով սահմանվել է, որ սույն որոշման պահանջները չեն տարածվում մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելն սկսած և դեռևս չավարտված գնման գործընթացների, ինչպես նաև կնքված և գործող պայմանագրերի վրա: Այլ կերպ ասած՝ եթե անգամ ընդունում ենք, որ այդ ընկերություններն ու «ԱԷՄՋԻ» ՍՊ ընկերությունը հանդիսանում են փոխկապակցված ընկերություններ, ապա նշված իրավանորմի հիման վրա «ԱԿԱԷՄ» ՍՊԸ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկում ներառելու փաստը չէր կարող սահմանափակել «ԱԷՄՋԻ» ՍՊ ընկերության մասնակցության իրավունքը: Նշվածը պայմանավորված է այն հանգամանքով, որ «ԱԿԱԷՄ» ՍՊ ընկերության գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկում ներառելը՝ որպես գնման գործընթացի մի մաս, տեղի է ունեցել մինչև 2022 թվականի հոկտեմբերի 13-ի թիվ 1593-Ն որոշման ուժի մեջ մտնելը:

Բողոքաբերը գտել է, որ դատարանի փաստարկն առ այն, որ «ԱԿԱԷՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գնման գործընթացը, որի արդյունքում «ԱԿԱԷՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունն ընդգրկվել է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկում, ավարտվել է 15.10.2022 թվականին, այսինքն՝ մինչև ՀՀ կառավարության 13.10.2022 թվականի թիվ 1593-Ն որոշման օրինական ուժի մեջ մտնելը, որևէ իրավական հիմք չունի, քանի որ վերը նշված պարագայում «ԱԿԱԷՄ» ՍՊ ընկերության գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկում ներառելը՝ որպես գնման գործընթացի մի մաս, տեղի է ունեցել մինչև 2022 թվականի հոկտեմբերի 13-ի թիվ 1593-Ն որոշման ուժի մեջ մտնելը:

Եկել է եզրահանգման, որ դատարանը չի իրականացրել սույն գործով լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի քննություն, քանի որ վերը նշված փաստարկներից և դիրքորոշումից պարզ է դառնում, որ սույն գործով նյութերը ուսումնասիրվել են թերի:

Բողոքաբերը նկատել է, որ Կարգի 121-րդ կետը, /այն է՝ մասնակցի՝ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված ցուցակում ներառվելը, դրանում գտնվելու ժամանակահատվածում, ինքնաբերաբար հանգեցնում է վերջինիս հետ փոխկապակցված

անձանց գնումների գործընթացին մասնակցության իրավունքի սահմանափակման,/ Կարգում լրացվել է 2022 թվականի հոկտեմբերի 13-ի թիվ 1593-Ն որոշմամբ, որպիսի պայմաններում այդ նորմատիվ իրավական ակտը չէր կարող հետադարձ ուժ ունենալ և դրա գործողությունը տարածվել դրա ուժի մեջ մտնելուց հետո գործող հարաբերությունների վրա:

Հիշատակել է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը և փաստել, որ մինչև Կարգի 121-րդ կետով լրացնելու պահ ցանկում ներառված մասնակիցների հետ փոխկապակցված անձանց իրավունքների ու օրինական շահերի վրա այն չի կարող ազդեցություն ունենալ:

Հակադարձելով Դատարանի հետևություններին՝ Բողոքաբերը նշել է, որ անգամ եթե Կարգի 121-րդ կետով է սահմանվել՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված ցուցակում ներառվելը, նշվածով պայմանավորված և ելնելով «ներառվելը» բառի բուն նշանակությունից՝ ապա նշված նորմը կիրառելի է միայն դրա ուժի մեջ մտնելու օրվանից հետո ծագած իրավահարաբերությունների նկատմամբ: Ասվածը հիմնավորվում է նաև այն փաստական հանգամանքով, որ նորմում գրվել է «ներառվելը», այլ ոչ թե «ներառված լինելը», որպիսի հանգամանքը միանշանակ թույլ կտար եզրակացնել, որ նորմի փոփոխություններն ունեն հետադարձ ուժ և վերաբերում են մինչև Կարգի 121-րդ կետի լրացնելու պահը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկում ներառված մասնակիցների հետ փոխկապակցված ընկերություններին:

Նշել է նաև այն հանգամանքը, որ հանձնաժողովը որոշել է գնումների համակարգողին առաջարկել 5/հինգ աշխատանքային օրվա ընթացքում ուղարկել համապատասխան գրությունը ՀՀ Ֆինանսների նախարարություն, այն դեպքում երբ Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա: Սույն մասում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին:

Վերոնշյալ իրավական ու փաստական հանգամանքների հիման վրա՝ Բողոքաբերը փաստել է, որ սույն դեպքում Հանձնաժողովի կողմից կայացված՝ համակարգողին (քարտուղարին) 5/հինգ աշխատանքային օրվա ընթացքում համապատասխան գրություն ուղարկելու առաջարկ ներկայացնելը նույնպես ոչ օրինաչափ է, քանի որ Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով հստակ սահմանվել են կանոններ և ժամկետներ՝ պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշում, այդ որոշման կայացման ժամկետ՝ գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող տասն օրվա ընթացք:

Դատարանն, անդրադառնալով այն հարցին թե արդյո՞ք 02.02.2023 թվականի դրությամբ առկա է եղել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված հիմքով գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում «ԱԷՄՋԻ» ՍՊԸ-ին ներառելու նպատակով լիազոր մարմին ուղղված դիմում, փաստել է, որ հայցվորը խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, ստանձնած պարտավորության խախտումը հանգեցրել է գնման գործընթացին հայցվորի հետագա մասնակցության դադարեցմանը, հայցվորը հրավերով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը: Սակայն վճռի որևէ մասում նշված չէ թե ո՞ր պարտավորության մասին է խոսքը:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» և նույն հոդվածի 2-րդ մասի համադրված վերլուծության արդյունքում, հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված իրավակարգավորումը՝ հանգել է այն հետևության, որ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկում ներառելու (պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման կայացման) համար անհրաժեշտ է երկու միաժամանակյա վավերապայմանների առկայություն՝

Ա) խախտել է պայմանագրով կամ գնման գործընթացով ստանձնած պարտավորություն և

Բ) մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

Հիշատակել է Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, Կարգի 32-րդ կետի 9-րդ ենթակետը և գտել, որ նորմերի վերլուծությունը ցույց է տալիս, որ հայտի ապահովում չի ներկայացվում այն դեպքերում, երբ գնման հայտով տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի, աշխատանքի կամ ծառայության գինը (պլանավորված (կանխատեսվող) գնման ընդհանուր գինը) չի գերազանցում գնումների բազային միավորի քսանհինգապատիկը (25,000,000.00 (քսանհինգ միլիոն) ՀՀ դրամ՝ հիմք՝ Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետ՝ գնումների բազային միավոր՝ մեկ միլիոն ՀՀ դրամ):

Սույն գործում առկա փաստերից հետևում է, որ «ԱԷՄՋԻ» ՍՊԸ-ի վերաբերյալ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներկառելու վերաբերյալ որոշումը կայացվել է վերոնշյալ միաժամանակյա վավերապայմաններից միայն այն հիմքով, որ վերջինս ենթադրաբար խախտել է գնման գործընթացով ստանձնած պարտավորություն: Սակայն սույն դեպքում միայն այդ հիմքի ի հայտ գալը դեռ բավարար չէր Ընկերությանը ցանկում ներառելու մասին որոշում կայացնելու համար: Վերջինս կարող էր ցանկում ներառվել գնման գործընթացով ստանձնած պարտավորության խախտման և հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը չվճարելու հիմքերի միաժամակյա առկայության դեմքում, ինչը մեր դեպքում առկա չէ:

Ավելին, հրավերով չի սահմանվում հայտի ապահովում, ինչպես նաև վճարման ժամկետներ, սակայն, ելնելով Օրենքի վերը հիշատակված դրույթի բովանդակությունից և այն մեկնաբանելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված իրավակարգավորման լույսի ներքո, փաստել է, որ սույն դեպքում

«ԱԷՄՋԻ» ՍՊԸ-ն կարող էր ընդգրկվել ցանկում երկու միաժամանակյա վավերապայմանների հիմքերի առկայության դեպքում: Եվ քանի որ հրավերով առկա չէ հայտի ապահովում կամ դրա վճարման ժամկետներ, ուստի այն ի սկզբանե զրկել էր Պատվիրատուին ընկերության նկատմամբ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով սահմանված պատասխանատվության միջոցը կիրառելու իրավական հնարավորությունից:

Սույն դեպքում, Պատասխանողի կողմից գործի քննության ընթացքում այդպես էլ ոչ մի ապացույց չի ներկայացվել, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ Ընկերության հետ փոխկապակցված անձը գտնվել է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Այն դեպքում, երբ պատասխանին կից ներկայացված իրավաբանական անձանց պետական միասնական ռեգիստրից վերցված իրական շահառուների վերաբերյալ տվյալները հաստատված են 22.02.2023թ.-ին (հայտը ներկայացնելուց և այն անբավարար գնահատվելուց ավելի ուշ), իսկ այդ տվյալներն էլ արտատպված են կայքից 17.03.2023թ.-ին: Այսինքն ստացվում է, որ Պատվիրատուն Ընկերության հայտը մերժելու պահին չի ունեցել որևէ փաստական հիմք և մերժել է ենթադրություններով, որպիսի հանգամանքները դատարանի կողմից ընդհանրապես հաշվի չեն առնվել:

Դատարանն այդպես էլ չի բացահայտել, թե Պատասխանողը կարող էր 02.02.2023թ.-ին կայացնել պատճառաբանված որոշում՝ մինչև Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված հանգամանքի ի հայտ գալը, սույն դեպքում կնքված պայմանագրի մասին հայտարարությունը տեղեկագրում հրապարակելը, և երկրորդ՝ Ընկերության կողմից հայտ ներկայացնելու օրվա դրությամբ իր հետ փոխկապակցված անձանց վերաբերյալ Պատվիրատուն (հանձնաժողովը) տեղեկություններ ունեցել է, թե՝ ոչ: Վերջիվերջո՝ Ընկերության հայտը դեռ հունվար ամսին մերժելու համար փաստական հիմք առկա եղել է, թե՝ ոչ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի իրավանորմում պարունակվող բառերի և արտահայտությունների՝ դրանց տառացի նշանակությամբ մեկնաբանման արդյունքում փաստել է հետևյալը.

1. Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում մասնակիցը կարող է ներառվել պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա:

2. Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում մասնակից ներառելու մասին պատճառաբանված որոշումը պետք է ընդունվի տասն օրվա ընթացքում այն բանից հետո, երբ տեղի է ունեցել ներքոհիշյալ երեք իրադարձություններից որևէ մեկը.

- գնման ընթացակարգը հայտարարվել է չկայացած, կամ
- հրապարակվել է կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը, կամ
- հրապարակվել է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը:

Սույն գործի փաստերի համաձայն գնման ընթացակարգերի հանձնաժողովների արձանագրություններով վերջիններս ուսումնասիրելով Ընկերության փոխկապակցված անձանց Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում գտնվելու

հանգամանքը և հաշվի առնելով ՀՀ կառավարության 526-Ն որոշման 121-րդ կետը որոշել են մերժել «ԱԷՄՋԻ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված հայտը գնումների համակարգողին հանձնարարելով 5/հինգ/ օրյա ժամկետում համապատասխան գրությունը ՀՀ ֆինանսների նախարարություն ուղարկելու: Այնուհետև, 02.02.2023թ.-ին Պատասխանողի կողմից կայացվել է որոշում, որի համաձայն՝ «ԱԷՄՋԻ» ՍՊԸ-ի տվյալները համապատասխան հիմքերով պարտավորվել են ներկայացնել լիազորված մարմին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

Ամբողջ վերոգրյալ իրավական ու փաստական հիմքերի հիման վրա՝ գտնում ենք, որ պատվիրատուի կայացված որոշումը կայացվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված ժամկետների խախտմամբ:

Մասնավորապես՝ այն կարող էր կայացվել միայն ներքոնշյալ պայմաններից որևէ մեկի առկայության դեպքում՝ տասն օրյա ժամկետում՝

- գնման ընթացակարգը հայտարարվել է չկայացած, կամ՝
- հրապարակվել է կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը, կամ՝
- հրապարակվել է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը:

Որպես իրավական փաստարկ, հիմք ընդունելով ՀՀ դատական օրենսգիրք սահմանադրական օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասը, դատարանի ուշադրությունն ենք հրավիրում նույնանման փաստերով Հայաստանի Հանրապետության դատարանի՝ թիվ ԵԴ/0306/02/23 քաղաքացիական գործով կայացված և օրինական ուժի մեջ մտած դատական ակտում առկա օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտի մեկնաբանություններին:

Ավելին, Բողոքաբերը գտել է, որ կայացված որոշումը չի համապատասխանում ՀՀ գնումների օրենսդրության համակարգումն իրականացնող պետական լիազոր մարմնի՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից սահմանված ՀՀ պետական կառավարման մարմիններին ուղղված թիվ 01.1/26-1/10085-2022 գրության կանոններին. Մասնավորապես՝ այդ շրջաբերականով սահմանվել է, որ՝ մասնակիցը՝ ցուցակում ներառվում է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից՝ գնման ընթացակարգը կազմակերպած պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա: Ընդ որում, նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման տվյալ ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակելու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում: Որոշումը կայացվելուն հաջորդող օրն այն գրավոր տրամադրվում է ՀՀ ֆինանսների նախարարությանը և տվյալ մասնակցին: Որոշումը պետք է պարունակի առնվազն հետևյալ տեղեկությունները՝ Մասնակցի անվանումը, ՀՎՀՀ/ֆիզ. անձի դեպքում հանրային ծառայության համարանիշը, գործունեության հասցեն գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու իրավական հիմքը՝ ցուցակում ներառելու մասին պատվիրատուի ղեկավարի կայացրած որոշման ամսաթիվը և գնման ընթացակարգի ծածկագիրը, խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

Պատվիրատուի ղեկավարի կողմից կայացված որոշմամբ ընտրված միջոցի և հետապնդված նպատակի միջև չկա ողջամիտ համաչափություն՝ ստեղծելով ոչ իրավաչափ հավասարակշռություն Ընկերության իրավունքների և օրինական շահերի պաշտպանության առումով:

Հիշատակել է ՀՀ Սահմանադրության 59-րդ հոդվածը, 78-րդ հոդվածը, թիվ ԵԿԴ/1807/02/13 գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.11.2015 թվականի որոշումը և նշել, որ սույն գործի փաստերի և իրավակարգավորման պայմաններում, հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 78-րդ հոդվածի պահանջները, Պատվիրատուի ղեկավարի կողմից կայացված որոշմամբ ընտրված միջոցի և հետապնդված նպատակի միջև չկա ողջամիտ համաչափություն՝ ստեղծելով ոչ իրավաչափ հավասարակշռություն Ընկերության իրավունքների և օրինական շահերի պաշտպանության առումով: Ըստ այդմ՝ Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում երկու տարի ժամկետով ընդգրկելու մասին կայացված որոշումը, կայացվել է վերը նշված նորմերի պահանջների խախտմամբ՝ Ընկերությանը զրկելով ՀՀ Սահմանադրության 59-րդ հոդվածով ամրագրված տնտեսական, ներառյալ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունքից: Հետևաբար, փաստերի նման դասավորվածությունը թույլ է տալիս եզրահանգելու, որ Գեղարքունիքի մարզի «Վարդենիսի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության պատճառաբանված որոշումը կայացվել է անհամաչափության և որոշակիության սկզբունքի խախտմամբ, ուստի այն ենթակա է անվավեր ճանաչման:

Հայտնել է նաև, որ պատվիրատուի ղեկավարի կողմից կայացված որոշումը չի պարունակում պատճառաբանություն, և առկա չէ հիմնավորում, թե հայտում ինչպիսի անհամապատասխանություններ են առկա եղել: Հարկ է նշել, որ պատվիրատուն հայցվորին վերագրելով հայտում առկա փաստաթղթային անհամապատասխանություն՝ հայցվորի առջև չի բացահայտել, թե որն է այդ խախտման փաստական հիմքը: Փաստորեն խախտումը ձևականորեն բնութագրվել է, սակայն այն բավականաչափ որոշակի չէ, և պարզ չէ, թե հայցվորը ինչպես պետք է կանխատեսեր և իր վարքագիծը համապատասխանեցներ ենթադրյալ խախտման կանխարգելմանը:

Եվ որպես իրավական փաստարկ, սույն գործով հատկանշական է թիվ ԵԴ/59580/02/22 քաղաքացիական գործով կայացված ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատական ակտով արտահայտված իրավական դիրքորոշումը:

Ինչ վերաբերում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի կիրառման վերաբերյալ Դատարանի կողմից արված դատողություններին, ապա դրանք տրամաբանական չեն և չեն ելնում օրենսդրի նորմով սահմանած նպատակներից: Օրենքը չի սահմանել, որ եթե հրավերով սահմանված չէ հայտի ապահովման վճարման կարգ ու ժամկետներ, ուրեմն այն չի կարող կիրառվել: Օրենքի բովանդակությամբ ավելի քան հստակ է, որ մասնակցին ցուցակում ներառելու համար անհրաժեշտ է երկու վավերապայմանների

միաժամանակյա առկայություն, ըստ այդմ՝ այդ վավերապայմաններից որևէ մեկի բացակայությունը հանգեցնում է նշված դրույթի կիրառման անհնարինության:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքաբերը հանգել է այն եզրակացության, որ Դատարանի 14.04.2023թվականի վճիռն անհիմն է, ենթակա է ամբողջությամբ բեկանման:

Ելնելով վերոգրյալներից՝ խնդրել է դատարանի 14.04.2023թվականի վճիռը բեկանել և փոփոխել՝ հայցը բավարարել ամբողջությամբ:

3. Վերաքննիչ բողոքի պատասխան ներկայացրած անձի դիրքորոշումը.

«Վարդենիսի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի անունից ներկայացվել է վերաքննիչ բողոքի պատասխան, որով պատասխանողն անդրադառնալով վերաքննիչ բողոքի հիմքերին՝ գտել է, որ բողոքն անհիմն է:

Մեջբերել է «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի «ա» պարբերությունը, ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետը, կարգի 121-րդ կետը և հայտնել, որ եթե գնման ընթացակարգի շրջանակում մասնակցի հայտը մերժվել է վերջինիս հետ փոխկապակցված անձանց գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառված լինելու հանգամանքով պայմանավորված, ապա նշված հանգամանքը ևս համարվում է գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում: Եվ ձեռնարկվում են միջոցներ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ուղղությամբ: Դատարանի մեկնաբանումը սխալ չէ և իրավաչափ է:

Վիճարկվող որոշման ընդունման հիմքում դրվել են հետևյալ փաստական և իրավական հանգամանքները.

1. Հայցվորը և «ԱԿԱԷՄ» ՍՊԸ-ն հանդիսանում են փոխկապակցված կազմակերպություններ՝ նկատի ունենալով, որ Արման Դաշյանը հանդիսանում է Հայցվորի և «ԱԿԱԷՄ» ՍՊ ընկերության իրական շահառուն:

2. Հայցվորի կողմից հայտի ներկայացման օրվա դրությամբ «ԱԿԱԷՄ» ՍՊԸ-ն ներառված է եղել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

3. ՀՀ կառավարության 04.05.2017թ-ի թիվ 526-Ն որոշման թիվ 1 հավելվածով հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 121-րդ կետի համաձայն՝ մասնակցի օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված ցուցակում ներառվելը, դրանում գտնվելու ժամանակահատվածում, ինքնաբերաբար հանգեցնում է վերջինիս հետ փոխկապակցված անձանց գնումների գործընթացին

4. ՀՀ կառավարության թիվ 1593-Ն որոշմամբ, որն ուժի մեջ է մտել 02.11.2022թ-ին, և որի 3-րդ կետի համաձայն՝ նույն որոշման պահանջները չեն տարածվում միևնույն որոշումն ուժի մեջ մտնելն սկսած և դեռևս չավարտված գնման գործընթացների, ինչպես նաև կնքված և գործող պայմանագրերի վրա:

5. Սույն գործով գնման գործընթացը սկսվել է ՀՀ Կառավարության 13.10.2022թ-ի թիվ 1593-Ն որոշման ուժի մեջ մտնելուց հետո, հետևաբար դրա պահանջները կիրառելի են սույն գործով խնդրո առարկա գնման ընթացակարգի նկատմամբ, և գնահատող հանձնաժողովը, ինչպես նաև Պատասխանողի ղեկավարը պարտավոր էին առաջնորդվել հիշյալ որոշման պահանջներով և սահմանափակել Հայցվորի գնման գործընթացին մասնակցելու իրավունքը:

Վերոնշյալի հիման վրա փաստել է, որ անհիմն են Հայցվորի պնդումներն առ այն, որ ՀՀ կառավարության 13.10.2022թ.-ի թիվ 1593-Ն որոշմամբ կատարված փոփոխությունները Հայցվորի նկատմամբ կիրառվել են դրանց հետադարձ ուժ տալով:

Հայցադիմումի տեքստում Հայցվորը վկայակոչել է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներն առ այն, որ նորմատիվ իրավական ակտի գործողությունը տարածվում է դրա ուժի մեջ մտնելուց հետո գործող հարաբերությունների վրա, եթե այլ բան նախատեսված չէ Սահմանադրությամբ, օրենքով կամ տվյալ նորմատիվ իրավական ակտով: Սույն դեպքում Հայցվորի և «ԱԿԱԷՄ» ՍՊԸ-ի փոխկապակցվածության և վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառված լինելու հանգամանքներն առկա են եղել հայտի ներկայացման օրվա դրությամբ, երբ արդեն գործում էին վերոնշյալ իրավակարգավորումները: Հետևաբար գնահատող հանձնաժողովը և Պատվիրատուի ղեկավարն այլ կերպ գործելու իրավասություն պարզապես չունեին, քան սահմանափակել Հայցվորի գնումների գործընթացին մասնակցելու իրավունքը, ինչի շրջանակներում էլ ընդունվել է սույն գործով վիճարկվող որոշումը:

Ինչ վերաբերում է Հայցվորի այն փաստարկին, որ սկզբնապես իր հայտը գնահատվել է բավարար, և այդ պայմաններում հայտը մերժելու հնարավորություն Պատասխանողն այլևս չուներ, ապա նշել է, որ Պատասխանողը հիմք էր ընդունել Հայցվորի հայտարարությունն առ այն, որ չունի փոխկապակցված անձինք, որոնք ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Գնման գործընթացի իրականացման ընթացքում Պատասխանողը ձեռք է բերել հակառակ փաստը հավաստող տեղեկություններ, ինչը նախ նշանակում է, որ հայտ ներկայացնելիս Հայցվորը ներկայացրել է կեղծ տեղեկություններ, և նաև նշանակում է, որ այդ փաստը հայտնաբերելու դեպքում Պատասխանողն ուներ իրավաչափ գործելու ընդամենը մեկ հնարավորություն մերժել Հայցվորի հայտը և նախաձեռնել Հայցվորին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Կարգի 67-րդ կետի համաձայն գնահատող հանձնաժողովը կարող է պատճառաբանված որոշման դեպքում ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավական մարմինների գրավոր եզրակացությունը:

Հայցվորի պնդումը, թե որոշումը չի համապատասխանում ՀՀ գնումների օրենսդրությամբ սահմանված կարգին, հիմնավոր չի համարել, քանի որ գտել է, որ

այն պարունակում է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից սահմանված տեղեկատվությունը՝ Անվանումը, Ֆիզիկական անձի սոց. համարանիշը, գնումների

գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու իրավական հիմքը, ցուցակում ներառելու մասին պատվիրատուի ղեկավարի կայացրած որոշման ամսաթիվը և գնման ընթացակարգի ծածկագիրը,:

Ինչ վերաբերում է Հայցվորի փաստարկին առ այն, որ վիճարկվող որոշումն ընդունվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի պահանջների խախտմամբ, մասնավորապես, հաշվի չի առնվել, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պարտադիր պայման է հանդիսանում նաև մասնակցի կողմից հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը չվճարելու հանգամանքը, ապա նշել է, որ հրավերով հայտի ապահովում և դրա վճարման կարգ ու ժամկետներ նախատեսված չեն եղել, հետևաբար վկայակոչված դրույթի պահանջները քննարկվող դեպքում կիրառելի չեն:

Ելնելով վերոնշյալից՝ խնդրել է ներկայացված վերաքննիչ բողոքը մերժել և դատարանի 14.04.2023 թվականի վճիռը թողնել անփոփոխ:

4.Վերաքննիչ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

1. «Վարդենիսի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կարիքների համար դեղորայքի մատակարարման նպատակով հայտարարվել են «ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-23/1» և «ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-23/2» ծածկագրերով գնման ընթացակարգերը:

2. «ԱԷՄՋԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից «ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-23/1» և «ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-23/2» ծածկագրերով հայտարարված գնանշման հարցմանը մասնակցելու դիմում-հայտարարություններ են ներկայացվել:

3. «ԱԿԱԷՄ» ՍՊԸ-ի և «ԱԷՄՋԻ» ՍՊԸ-ի իրական շահառու է հանդիսանում Արման Դաշյանը:

4. «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկ» վերտառությամբ գրության համաձայն «ԱԿԱԷՄ» ՍՊԸ-ն ընդգրկվել է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում 15.10.2022-15.10.2024 թվականներն ընկած ժամանակահատվածով:

5. «Վարդենիսի ԲԿ» ՓԲԸ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Շ.Շահինյանի կողմից 02.02.2023 թվականին կայացված «Պատճառաբանված որոշում» վերտառությամբ փաստաթղթի համաձայն «Վարդենիսի ԲԿ» ՓԲԸ կարիքների համար դեղորայքի ձեռքբերման նպատակով «ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-23/1 և «ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-23/1» ծածկագրերով գնանշման հարցման ընթացակարգերի մասնակից «ԱԷՄՋԻ» ՍՊԸ-ն Հավելված 1-ի 1-ին կետում նշված է , որ տվյալ ընկերությունը և այդ ընկերության փոխկապակցված անձինք բավարարում են հրավերի պայմաններին: Սակայն գնահատող հանձնաժողովը ստուգել է «ԱԷՄՋԻ» ՍՊԸ-ի և այդ ՍՊԸ-ին փոխկապակցված անձանց տվյալները ՀՀ Գնումների մասին 6րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների» ցուցակում, պարզել, որ «ԱԷՄՋԻ» ՍՊԸ-ի փոխկապակցված անձ/է համարվում նաև հայտերի ներկայացման ժամանակահատվածում նշված ցուցակում ներառված «ԱԿԱԷՄ» ՍՊԸ-ի իրական

շահառու ներկայացված անձը՝ Արման Դաշյանը (ՀԾՀ 3304720391) և 31.01.2023 թվականին որոշում է ընդունել մերժել «ԱԷՄՋԻ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը: Հիմք ընդունելով ընթացակարգի հրավերի 2.3, ինչպես նաև ՀՀ կառավարության 2017 թվականի 526-ն որոշման 121-րդ կետը՝ ըստ որի մասնակիցի՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված ցուցակում ներառվելը, դրանում գտնվելու ժամանակահատվածում, ինքնաբերաբար հանգեցնում է վերջինիս հետ փոխկապակցված անձանց գնումների գործընթացին մասնակցության իրավունքի սահմանափակման, համապատասխան հիմքերով պատճառաբանված որոշում է ընդունել ներկայացնել լիազոր մարմին՝ «ԱԷՄՋԻ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցուցակում ներառելու:

5.Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում, բացառությամբ սույն օրենսգրքի 365-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքերի:

Միաժամանակ, Վերաքննիչ դատարանը սույն գործի շրջանակներում վերաքննիչ բողոքի հիմքերին և հիմնավորումներին անդրադառնում է իր նախընտրած հերթականությամբ՝ նպատակ ունենալով դրանք մի կողմից դիտարկել գործի ելքը կանխորոշելու համար առաջնային նշանակություն ունենալու տեսանկյունից, իսկ մյուս կողմից դրանց փոխադարձ տրամաբանական կապից ելնելով:

1. Ըստ այդմ՝ Վերաքննիչ դատարանը առաջնահերթ անդրադառնում է վերաքննիչ բողոքի այն փաստարկին, որ «ԱԿԱԷՄ» ՍՊԸ՝ որպես «ԱԷՄՋԻ» ՍՊԸ հետ փոխկապակցված անձ, գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկում ներառվել է մինչև ՀՀ կառավարության 2022 թվականի հոկտեմբերի 13-ի թիվ 1593-Ն որոշման ուժի մեջ մտնելու օրը՝ 02.11.2022թ.-ը, որի 3-րդ կետի համաձայն, նույն որոշման պահանջները չեն տարածվում մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելն սկսած և դեռևս չավարտված գնման գործընթացների, *ինչպես նաև կնքված* և գործող պայմանագրերի վրա, որպիսի փաստը չէր կարող սահմանափակել «ԱԷՄՋԻ» ՍՊ ընկերության մասնակցության իրավունքը:

Համաձայն «Գնումների մասին» օրենքի 2-րդ հոդվածի 23-րդ կետի, **գնման գործընթացը իրենից ներկայացնում է** գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն, ներառյալ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

«ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-23/1 և «ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-23/2» ծածկագրերով գնանշման հարցման հայտարարությունը հաստատվել է Գնահատող հանձնաժողովի 06.01.2023թվականի թիվ 23/1Ա որոշմամբ, որպիսի փաստը «Գնումների մասին» օրենքի 2-րդ հոդվածի 23-րդ կետի ուժով հիմք է տալիս գալ միանշանակ եզրակացության, որ վերոհիշյալ երկու ծածկագրերով գնման

գործընթացը մեկնարկել է 06.012023թվականից, ուստի ՀՀ կառավարության 2022 թվականի հոկտեմբերի 13-ի թիվ 1593-Ն որոշման 3-րդ կետով սահմանված բացառությունը կիրառելի չէ և այդ նորմատիվ իրավական ակտի պահանջները ամբողջությամբ տարածվել են հիշյալ գնման գործընթացների վրա և պարտադիր են եղել «ԱԷՄՋԻ» ՍՊԸ համար:

Ինչ վերաբերում է «ԱԿԱԷՄ» ՍՊԸ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկում մինչև ՀՀ կառավարության 2022 թվականի հոկտեմբերի 13-ի թիվ 1593-Ն որոշման ուժի մեջ մտնելու օրը 02.11.2022թվականը ներառված լինելուն, ապա քննարկվող դեպքում դա ընդամենը օբյեկտիվ իրականությունում տվյալ պահին գոյություն ունեցող փաստ է եղել, որի կապակցությամբ հիշատակված նոր իրավակարգավորումը պայմանավորել է որոշակի բացասական իրավական հետևանքներ գնման գործընթացի մասնակից «ԱԷՄՋԻ» ՍՊԸ համար:

Եթե իրականում ՀՀ կառավարությունը նպատակ ունենար սահմանել այնպիսի իրավակարգավորում, որ ՀՀ կառավարության 2022 թվականի հոկտեմբերի 13-ի թիվ 1593-Ն որոշմամբ Կարգում լրացված 121-րդ կետը կիրառելի լիներ բացառապես այն դեպքերում, երբ որևէ մասնակցի օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված ցուցակում ներառված լինելու փաստը նրա հետ փոխկապակցված անձի համար այլ գնման գործընթացում բացասական իրավական հետևանքներ առաջացնելու առումով կարևորվեր նոր կարգավորման սահմանումից հետո միայն, ապա Վերաքննիչ դատարանի գնահատմամբ ոչինչ չէր կարող կաշկանդել ՀՀ կառավարությանը Կարգում լրացված 121-րդ կետը ընդունել հետևյալ բովանդակությամբ. «Մասնակցի օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված ցուցակում ներառվելը, դրանում գտնվելու ժամանակահատվածում, ինքնաբերաբար հանգեցնում է վերջինիս հետ փոխկապակցված անձանց գնումների գործընթացին մասնակցության իրավունքի սահմանափակման, <u>**պայմանով, որ տվյալ մասնակիցը ևս հիշյալ ցուցակում ներառվել է սույն որոշման ընդունումից հետո**</u>»:

Նշվածի համատեքստում ավելորդ չէ նշել, որ Գնահատող հանձնաժողովի 06.01.2023թվականի թիվ 23/1Ա որոշմամբ հաստատված «ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-23/1 և «ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-23/1» ծածկագրերով գնանշման հարցման հայտարարության 2.3-րդ կետում հստակ նշված է եղել ՀՀ կառավարության 2022 թվականի հոկտեմբերի 13-ի թիվ 1593-Ն որոշմամբ Կարգի լրացված 121-րդ կետով նախատեսված բացասական իրավական հետևանքների մասին: Այսինքն, «ԱԷՄՋԻ» ՍՊԸ «ԱԿԱԷՄ» ՍՊԸ հետ փոխկապակցվածության և վերջինիս օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված ցուցակում ներառված լինելու փաստերի առկայության պայմաններում պետք է տեղյակ լիներ նաև վերը նշված բացասական հետևանքների վրա հասնելու անխուսափելիության մասին:

Իր հերթին հիմք ընդունելով վերը նշված փաստերը և ղեկավարվելով Կարգի 121-րդ կետով մրցույթի գնահատող հանձնաժողովը ստուգել է «ԱԷՄՋԻ» ՍՊԸ-ի և այդ ՍՊԸ-ի փոխկապակցված անձանց տվյալները գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում և պարզել, որ «ԱԷՄՋԻ» ՍՊԸ-ի փոխկապակցված անձ է համարվում նաև «ԱԿԱԷՄ» ՍՊԸ-ի իրական շահառու անձը (Արման Դաշյան) և կայացրել է որոշում մերժել է «ԱԷՄՋԻ» ՍՊԸ-

ի հայտը, որը Վերաքննիչ դատարանը վերը բերված իրավական հիմնավորումների ներքո գնահատում է ամբողջովին իրավաչափ (տես Գնահատող հանձնաժողովի 31.01.2023թ. նիստի թիվ 23/3բ արձանագրություն): Հետևաբար, անհիմն է բողոքաբերի այն պնդումը, որ «Գնումների մասին» օրենքի 26-րդ հոդվածով և Կարգի 14-րդ կետով Գնահատող հանձնաժողովին չի վերապահվել նման ստուգում իրականացնելու իրավասությունները և հիշյալ հանձնաժողովը կարող է միայն բացել և գնահատել հայտերը: Վերաքննիչ դատարանի գնահատմամբ Կարգի 121-րդ կետով սահմանված լիազորության պատշաճ իրականացման առաջնային իրավասությունը պատկանում է հենց գնահատող հանձնաժողովին: Հակառակ տրամաբանությամբ շարժվելու դեպքում կստացվի, որ եթե գնահատող հանձնաժողովը չարգելափակի նման անձի մասնակցությունը, նրա հետ կնքվի պայմանագիր, ինչը իր հերթին իմաստազուրկ կդարձնի Կարգի 121-րդ կետը, որովհետև պայմանագրի կնքումից հետո հնարավոր չէ սահմանափակել անձի մասնակցությունը գնման գործընթացին:

Այսպիսով ամփոփելով վերը նշվածը Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքի հիշյալ հիմքը և հիմնավորումը համարում է անհիմն:

2. Անդրադառնալով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված հիմքով գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում «ԱԷՄՋԻ» ՍՊԸ-ին ներառելու անթույլատրելիության վերաբերյալ վերաքննիչ բողոքի հիմքին և հիմնավորումներին, Վերաքննիչ դատարանը գալիս է հետևյալ եզրահանգմանը.

Համաձայն «Գնումների մասին» 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունի այն անձը, որը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: *Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:*

Ինչպես բխում է հիշյալ նորմի դիսպոզիցիայի կառուցվածքից անձն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե առկա են հետևյալ երկու պայմաններից որևէ մեկը.

-եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և (կամ)

-մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել

հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը[1]:

Մինչդեռ «ԱԷՄՋԻ» ՍՊԸ-ը ներառվել է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում լրիվ այլ փաստական և իրավական հիմքերով. մասնավորապես՝ իր հետ փոխկապակցված «ԱԿԱԷՄ» ՍՊԸ՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկում 31.01.2023թվականի դրությամբ ներառված լինելու փաստի ուժով և ՀՀ կառավարության 2022 թվականի հոկտեմբերի 13-ի թիվ 1593-Ն որոշմամբ Կարգի լրացված 121-րդ կետով սահմանված իրավակարգավորման հիմքով: Վերաքննիչ դատարանի գնահատմամբ գնման մասնակցի՝ իր հետ փոխկապակցված այլ իրավաբանական անձի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկում ներառված լինելու փաստն ինքնին չի կարող մեկնաբանվել որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որի խախտումն էլ հանգեցրել է պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը: Այս առումով, հատկանշական է նաև այն հանգամանքը, որ Դատարանը ևս չի բացահայտել, թե կոնկրետ ինչպիսի պարտավորություն է ստանձնել «ԱԷՄՋԻ» ՍՊԸ-ը, որն էլ իր հերթին հանգեցրել է նշված հետևանքին: Դատարանի ամբողջ դատողությունները վերջնարդյունքում հանգում են նրան, որ «ԱԷՄՋԻ» ՍՊԸ-ը չունենալով գնմպն գործընթացին մասնակցելու իրավունք, այնուամենայնիվ մասնակցել է գորընթացին թույլ տալով Կարգի 121-րդ կետի խախտում: Մինչդեռ նորմատիվ իրավական ակտի պահանջների խախտում թույլ տալու փաստը և գնման գործընթացում պարտավորություն ստանձնելը և այն խախտելու փաստը լրիվ տարբեր և չեն կարող նույնացվել: Նման խախտում թույլ տալը ընդամենը բավարար հիմք է սահմանափակելու անձի մասնակցության իրավունքը կոնկրետ գնման գործընթացում, ինչն էլ սույն գործով տեղի է ունեցել գնահատող հանձնաժողովի 31.01.2023թվականի արձանագրությամբ: Բացի այդ, չհաշված, որ օրենքով նախատեսված չէ նման հիմքով «ԱԷՄՋԻ» ՍՊԸ-ը հիշյալ ցուցակում ներառելու հնարավորություն, վերջինիս նկատմամբ փաստացի երկու ներգործության միջոց կիրառելը, այն էլ՝ իրավաբանորեն լրիվ այլ իրավաբանական անձի («ԱԿԱԷՄ» ՍՊԸ) գործունեության հետևանքով, անկախ վերջիններիս՝ միմյանց հետ փոխկապակցված լինելու փաստից, պարզապես համաչափ չի լինի թույլ տրված խախտմանը:

Այսպիսով, Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքի հիշյալ փաստարկը համարում է հիմնավորված և գտնում է, որ «ԱԷՄՋԻ» ՍՊԸ-ը իր հետ փոխկապակցված «ԱԿԱԷՄ» ՍՊԸ՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկում ներառված լինելու և գնման գործընթացին «ԱԷՄՋԻ» ՍՊԸ մասնակցության փաստերը իրենց համակցության մեջ չեն կարող հիմք հանդիսանալ «Գնումների մասին» 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի վկայակոչմամբ «ԱԷՄՋԻ» ՍՊԸ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկում ներառելու համար: Հետևաբար, «Վարդենիսի բժշկական կենտրոն» ՓԲԸ տնօրենի 02.02.2023թվականի պատճառաբանված որոշումը իրավաչափ չէ:

[1] Պայմանավորված գործի փաստակազմի առանձնահատկություններով՝ առհասարակ կիրառելի չէ:

Բողոքաբերը, որպես իրավական փաստարկ, վերաքննիչ բողոքում վկայակոչել է նաև թիվ ԵԴ/59580/02/22 քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատական ակտով արտահայտված իրավական դիրքորոշումը, որին արդրադառնալով Վերաքննիչ դատարանը արձանագրում է հետևյալը.

ԵԴ/59580/02/22 քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 28.04.2023թվականի որոշմամբ «ԱԿԱԷՄ» ՍՊ ընկերության հայցն ընդդեմ «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲ ընկերության, երրորդ անձ՝ ՀՀ ֆինանսների նախարարություն՝ «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲ ընկերության կողմից ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված՝ «ԱԿԱԷՄ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին, թիվ 1965/22 գրությունը ոչ իրավաչափ ճանաչելու պահանջի մասին, բավարարվել է և «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲ ընկերության կողմից ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված՝ «ԱԿԱԷՄ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին, թիվ 1965/22 գրությունը ճանաչվել է ոչ իրավաչափ. հիշյալ որոշումը, ըստ «Դատալեքս» համակարգի տվյալների, վճռաբեկության կարգով չի բողոքարկվել և մտել է օրինական ուժի մեջ: Այսինքն վերացել է նաև այն փաստական և իրավական հիմքը, որի հիման վրա «ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-23/1 և «ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-23/2» ծածկագրերով գնման գործընթացի շրջանակներում «ԱԷՄՁԻ» ՍՊԸ ներառվել է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Հետևաբար, այս հիմքով ևս «ԱԷՄՁԻ» ՍՊԸ-ը չի կարող ներառվել հիշյալ ցուցակում:

Համաձայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 6-րդ մասի, Վերաքննիչ դատարանում բողոքի քննության ժամանակ առաջին ատյանի դատարանում հաստատված փաստերն ընդունվում են որպես հիմք, բացառությամբ այն դեպքի, երբ բողոքում վիճարկվում է այդ փաստը, և վերաքննիչ դատարանը հանգում է այն եզրակացության, որ տվյալ փաստի վերաբերյալ եզրակացության հանգելիս դատարանը սխալ է թույլ տվել: Նման դեպքերում վերաքննիչ դատարանն իրավունք ունի հաստատված համարելու նոր փաստ կամ հաստատված չհամարելու ստորադաս դատարանի հաստատած փաստը, եթե դատարանի հետազոտած ապացույցների հիման վրա հնարավոր է հանգել նման եզրակացության:

Հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի վերոհիշյալ նորմը, Վերաքննիչ դատարանը գտնում է, որ գործով առկա ապացույցների հետազոտման և սույն որոշմամբ արված վերլուծությունների հիման վրա պետք է հաստատել հետևյալ փաստը՝ դրանից բխող եզրահանգումներով. «ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-23/1 և «ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-23/2» ծածկագրերով գնման գործընթացի շրջանակներում «ԱԷՄՁԻ» ՍՊԸ չի ստանձնել որևէ պարտավորություն, որի խախտումն էլ «Գնումների մասին» 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի կանոններով հիմք կհանդիսանար վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

Այսպիսով, Վերաքննիչ դատարանը գտնում է, որ Դատարանը թույլ է տվել գործի ելքի վրա

ազդեցություն ունեցող դատական սխալ, հետևաբար անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 380-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված լիազորությունը՝ բեկանել դատական ակտը և փոփոխել այն՝ կայացնելով հայցը բավարարելու մասին նոր դատական ակտ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ դրա իրացումը թելադրվում է արդարադատության արդյունավետության՝ գործի քննության անհարկի ձգձգումներից խուսափելու անհրաժեշտությանը հանգող շահերով: Բացի այդ, Վերաքննիչ դատարանը գտնում է, որ տնտեսվարողներին անհիմն կերպով գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելը բացասաբար է անդրադառնում վերջիններիս բնականոն գործունեության վրա և չի բխում արդար մրցակցային միջավայր ապահովելու անհրաժեշտությունից, ինչը նույնպես ուղղակի առնչություն ունի արդարադատության շահի հետ:

<u>6.Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը դատական ծախսերի բաշխման վերաբերյալ.</u>

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Վերաքննիչ (....) դատարան բողոք բերելու և բողոքի քննության հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն գլխի («Դատական ծախսեր») կանոններին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Տվյալ պարագայում, հաշվի առնելով, որ հայցվորի կողմից ինչպես հայցադիմում, այնպես էլ վերաքննիչ բողոք ներկայացնելիս նախապես վճարվել է «Պետական տուրքի մասին» օրենքով սահմանված պետական տուրքի գումարը՝ ուստի վճռի բեկանման և հայցը բավարարման ենթակա լինելու վերաբերյալ նոր դատական ակտ կայացնելու պայմաններում պետական տուրքի փոխհատուցման պարտավորությունը պետք է դնել պատասխանողի վրա՝ համապատասխանաբար 50.000 և 75.000 դրամի չափով, հաշվի առնելով, որ «Պետական տուրքի մասին» օրենքի «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված որոշումների բողոքարկման հետ կապված վեճերով վերաքննիչ բողոքների ներկայացման համար պետական տուրքի գումարը 75.000 դրամ է, այլ ոչ թե 200.000 դրամ, ինչպես վճարել է բողոքաբերը: Ըստ այդմ՝ Բողոքաբերի կողմից 16.05.2023թվականի թիվ 003732 վճարման հանձնարարականով փաստացի ավել վճարված 125.000 դրամը ենթակա է վերադարձման բողոքաբերին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 380-րդ և 387-րդ հոդվածներով՝ Վերաքննիչ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. «ԱԷՄՋԻ» ՍՊԸ-ի վերաքննիչ բողոքը բավարարել. թիվ ԵԴ/8229/02/23 քաղաքացիական գործով ՀՀ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի 14.04.2023թվականի վճիռը բեկանել և փոփոխել հետևյալ կերպ. ««ԱԷՄՋԻ» ՍՊԸ հայցն ընդդեմ «Վարդենիսի բժշկական կենտրոն» ՓԲԸ տնօրենի 02.02.2023թվականի «պատճառաբանված որոշումը» գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում «ԱԷՄՋԻ» ՍՊԸ ներառելու մասին, անվավեր ճանաչելու պահանջով, բավարարել և անվավեր ճանաչել «Վարդենիսի բժշկական կենտրոն» ՓԲԸ տնօրենի 02.02.2023թվականի «պատճառաբանված որոշումը»:

2. «Վարդենիսի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ից հօգուտ «ԱԷՄՋԻ» ՍՊԸ բռնագանձել 125.000 դրամ՝ որպես հայցադիմում և վերաքննիչ բողոք ներկայացնելու համար վճարված պետական տուրքերի փոխհատուցման գումար և դատական ծախսերի հարցը համարել լուծված:

3. «ԱԷՄՋԻ» ՍՊԸ կողմից 16.05.2023թվականի թիվ 003732 վճարման հանձնարարականով փաստացի ավել վճարված 125.000 դրամը ենթակա է վերադարձման:

4. Սույն որոշումը դատական ծախսերի մասով կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի հարկադիր կերպով՝ ՀՀ ԱՆ դատական ակտերի հակադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

5. Դատարանի կողմից կիրառված հայցի ապահովման միջոցը պահպանել մինչև սույն գործով վերջնական դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը:

6. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո և նույն ժամկետում կարող է բողոքարկվել Վճռաբեկ դատարան:

ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴԱՏԱՎՈՐ	ԴԱՏԱՎՈՐ	ԴԱՏԱՎՈՐ
Կ.ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ	Ն.ՄԱՐԳԱՐՅԱՆ	Ս.ԹՈՐՈՍՅԱՆ

Որոշումը մտել է օրինական ուժի մեջ:

ԴԱՏԱՎՈՐ՝ Կ.ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ